

Վերծինե Սվազյան, ք.գ.դ.
ՀԱԻ

ԱՄԵՐԻԿԱՅԱՅՈՑ ՀԱՅԱՊԱՏՊԱՆՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ՝ ԸՍՏ ԲԱՆԱԿՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳՐԱՌՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ

Հոդվածը նվիրված է հայ Սփյուռքի մեծագույն համայնքներից մեկի՝ ամերիկահայոց բանավոր ավանդույթի գիտական համակողմանի ուսումնասիրությանը: Հիմք ընդունելով ժողովրդական նյութերի քանակական վերլուծության գիտական նորագույն մեթոդը՝ քննության ենթ ենթարկում ամերիկահայ հինգ սերունդների բանասացների հաղորդած ժողովրդական նյութերի քանակական և որակական փոխակերպումները, որոնք արդյունք են ժամանակի, տարածության և համաշխարհայնացման հետևանքով կրած տարաբնույթ փոփոխությունների: Այդ փոխակերպումները հատկապես նկատելի են ասույթային բանահյուսության «փոխառություններ» բաժնի նյութերում, որոնք առավելապես առնչվում են ամերիկահայոց առօրյա կենցաղին ու գործնական փոխհարաբերություններին:

Երկիր մոլորակի վրա ժամանակի ընթացքում կատարվում են պատմական, քաղաքական ու մշակութային անկանխատեսելի փոփոխություններ, և մարդը ստիպված է ենթարկվելու դրանց: Հետևաբար՝ ամերիկահայ համայնքում բազմաթիվ համակեցության նոր միջավայրի ազդեցության ներքո անհատն ինքնըստինքյան դառնում է բազմինքնության տեր՝ *գլոբալացված* անհատ: Ուստի, հակառակ հայապահպանման ամենօրյա ճիգ ու ջանքին, սերնդից սերունդ փոփոխության է ենթարկվում ոչ միայն ամերիկահայոց հայապահպանության մակարդակը, այլև նրանց ազգային ինքնությունը, լեզվամտածողությունն ու հոգեգիտակցական աշխարհը:

Հիմնաբառեր՝ ԱՄՆ, Արևմտյան Հայաստան, Կիլիկիա, բանահյուսություն, վիպական բանահյուսություն, քնարական բանահյուսություն, ասույթային բանահյուսություն, սերունդներ:

Ներածություն

Շուրջ 30 տարիների ընթացքում՝ 1979, 1990, 2001, 2004 և 2008 թվականներին դեպի ԱՄՆ պարբերաբար կատարած անձնական և գիտաժողովային հինգ ուղևորությունների ընթացքում անձնական նախաձեռնությամբ գրառել եմ ամերիկահայոց բանավոր մշակույթի նշխարները, միաժամանակ փորձել պարզել այդ ինքնատիպ համայնքի ավանդապահության մակարդակը՝ կապված ժամանակագրական և աշխարհագրական տեղաշարժերի, պատմաքաղաքական պայմանների, բանասացների սեռատարիքային հատկանիշների ու հոգեբանական խնդիրների հետ:

Գրառումների ընթացքում բանասացներից ստացված որոշակի անձնական տվյալների հիման վրա քննական վերլուծումներ եմ կատարել՝ գրառված նյութերը դիտարկելով ժամանակի հոլովությամբ: Ուշադրություն եմ դարձրել

հատկապես հաղորդված նյութերի և բանասացների ծննդավայրին, հետագայում նրանց ապրած վայրերին՝ ներկայացնելով յուրաքանչյուր անհատի ծննդավայրից մինչև ԱՄՆ հասնելու կյանքի ուղեծիրը: Փաստերի նման համադրումը հնարավորություն է ընձեռնել պարզելու հավաքված ժողովրդական նյութերի ավանդապահության մակարդակը: Վերլուծությունից պարզվել է, որ բանահյուսական նյութերի ծագման հետագծերը ձգվում են մինչև բանասացների բնօրրանը՝ Արևմտյան Հայաստան և Կիլիկիա, հետևաբար խնդիր է առաջացել պարզելու, թե որքան անաղարտ է պահպանվել ավանդական նյութը՝ հարագատ մնալով իր ակունքներին, և որքան է այն ենթարկվել ժամանակի ու նոր միջավայրի ազդեցություններին:

Բանասացները, Հայոց Յեղասպանությունից հետո տարբեր երկրներ տարագրվելով, հասել են ԱՄՆ՝ իրենց հետ տանելով հոգևոր ժառանգությունը, որ գրի ենք առել ԱՄՆ-ի՝ ինչպես արևմտյան, նույնպես էլ արևելյան ափերի հետևյալ հայաշատ քաղաքներում. Նյու-Յորք, Վաշինգտոն, Բոստոն, Ուստըր, Դետրոյտ, Սան-Ֆրանցիսկո, Լոս-Անջելես՝ մերձակա քաղաքներով, նաև Ֆրեզնո:

Դիտարկումների ընթացքում բացահայտվել են ամերիկահայոց ժողովրդական 1165 նյութերի և այդ նյութերը հաղորդած 206 բանասացների տեղային (աշխարհագրական), սեռային (տղամարդ, կին) և տարիքային (8–109 տարեկան՝ հինգ սերունդներ) փոխհարաբերությունների ուշագրավ օրինաչափություններ, նաև ժամանակի ընթացքում նրանց շարժընթացը:

Ընդհանուր համեմատական վերլուծություն

Հիմք ընդունելով Սանկտ-Պետերբուրգի և Համբուրգի համալսարանների պրոֆեսոր Իսիդոր Լևինի քանակական վերլուծության մեթոդը՝ քննության ենք ենթարկել նաև ժողովրդական նյութերի և բանասացների փոխհարաբերությունները¹: Այդ նպատակով կազմել ենք գրառված նյութերի և բանասացների սեռատարիքային հատկանիշներն արտացոլող համադրական աղյուսակ [աղ. 1]: «Սկզբնաղբյուրներ» բաժինը ներառում է՝ պատմական (106 միավոր), բանահյուսական (1004 միավոր), ազգագրական (14 միավոր) սկզբնաղբյուրներ և երգերի նոտագրություններ (41 միավոր):

Աղյուսակում բերված տվյալների համադրման միջոցով բացահայտվել են ժողովրդական նյութերի կենցաղավարման ու գոյատևման ընդհանուր պատկերն ու դրանց առանձին տեսակների նկատմամբ բանասացների սեռատարիքային որոշակի խմբերի վերաբերմունքը:

Աղյուսակի տողերով ներկայացված են սկզբնաղբյուրների տեսակներն՝ ըստ առանձին բաժինների ու ենթաբաժինների, իսկ սյունակներով՝ սերնդային խմբերն՝ ըստ սեռատարիքային առանձնահատկությունների:

Թեպետ գրառումների ընթացքում հավասարապես դիմել ենք բանասաց գույգ սեռերի ներկայացուցիչների, սակայն նկատելի է, որ նյութերի ոչ բո-

¹ Սվազյան 1984, 10–12:

լոր տեսակներն են հավասարաչափ կենցաղավարվել հիշյալ խմբերում: Պարզելու համար, թե նրանցից որն է առավել ավանդապահ նյութի այս կամ այն տեսակի նկատմամբ, դիմենք աղյուսակ 2-ին: «Սկզբնաղբյուրներ» բաժինը 1.165 միավոր է, ընդ որում՝ ժողովրդական նյութերի 541 միավորը հաղորդել են կանայք, իսկ 624 միավորը՝ տղամարդիկ:

Վերլուծությունը ըստ բաժինների

«Պատմական սկզբնաղբյուրներ» բաժնի Հայոց Ցեղասպանության հուշ-վկայությունների և գրույց-վկայությունների (65 միավոր) գերակշռությունը պատկանում է ԱՄՆ գաղթած բանասաց կանանց (37 միավոր), քանի որ հենց նրանք են կրել այդ համազգային ողբերգության անասելի ցավն ու տառապանքը, իսկ տղամարդիկ, որոնք զորակոչվել էին օսմանյան բանակ և դաժանորեն ոչնչացվել կամ հրաշքով փրկվել, հաղորդել են ընդամենը 28 միավոր:

«Ժամանակակիցների հարցազրույցների» (41 միավոր) գերակշռությունը պատկանում է տղամարդկանց (26 միավոր), իսկ կանանց՝ 15 միավոր:

«Բանահյուսական սկզբնաղբյուրներ» բաժնի «վիպական բանահյուսական» նյութերի (300 միավոր)՝ ավանդազրույցները, հեքիաթներն ու բարոյախրատական գրույցներն առավելապես կանայք են հաղորդել, իսկ առակները, կենդանապատում, պատմական և կենցաղային գրույցներն ու զավեշտազրույցներն իրենց ներքին ստորաբաժանումներով՝ ա. Օսմանյան կայսրությունը և հայերն իրենց քնօրրանում, բ. Հայերը և այլ ազգերն Ամերիկայում, գ. Նորեկողները Խորհրդային Հայաստանում, դ. Հայաստանցիներն Ամերիկայում, գերակշռությունը (217 միավոր) տղամարդկանցն է, իսկ 83 միավորը՝ կանանցը: Սա պայմանավորված է տղամարդկանց մտածածն ու զգացածն անկաշկանդ արտահայտելու կարողությամբ, հանրային-քաղաքական կյանքին նրանց ունեցած գործուն մասնակցությամբ, նաև՝ պատմական իրադարձությունների հիման վրա ձևավորված նրանց աշխարհայացքով ու կենսափիլիսոփայությամբ:

Այնինչ «քնարական բանահյուսություն» բաժնի (216 միավոր) Ամերիկահայոց պատմական երգերում, ուր ընդգրկված են «Հայոց Ցեղասպանության (1915–1923 թթ.) երգերի» (61 միավոր)՝ «ղերգության ողբերգերը» և «ինքնապաշտպանական հերոսամարտերի» ու «հայրենադարձության» երգերը, ինչպես նաև «քեֆ-թայմի» (խրախճանքի) երգերը, «ձոներգերը», «ազգահավաքի ու հայրենաշինության» խորխտ երգերը (48 միավոր) առավելապես տղամարդիկ են հաղորդել (19 միավոր), այդ թվում՝ նաև բանաստեղծական շնորհքով օժտված Գևորգ Քիլեջյանը:

Իսկ «որբի և որբանոցի», «հայրենագրկումի», «պանդխտության» և «պահանջատիրության» երգերի մեծ մասը (33 միավոր), ինչպես և «քնարական բանահյուսության» բաժնի երկրորդ մասը՝ «ամերիկահայ կյանքի երգերը» (155 միավոր), «մանկության», քառատող «խաղիկների», «սիրո և ընտանիքի» երգերը (107 միավոր) բաժին են ընկել կանանց, որոնք նաև հանդես են եկել զարույթով ի իրենց բանաստեղծություններով, ընդ որում՝ Ռոնյա Թերզյանը, Զարուհի Փարթամյանն ու Եվա Մեծորյանը: Հետևաբար՝ աղյուսակում միանգա-

մայն ճիշտ են բացահայտված բանասացների հոգեբանական խառնվածքի յուրահատկությունները. ի բնե հուզական կանայք, անմիջականորեն կապված լինելով առօրյա հոգսերին, ավելի հախտուն են արձագանքել կյանքի և առտնին կենցաղի մանր ու մեծ հոգսերին և իրադարձություններին, սկսած՝ լույս աշխարհ եկող մանկան օրորերգից, սիրո և ընտանիքի երգերից ու նրբահյուս խաղիկներից մինչև առօրյա կյանքի ընթացքն ուղեկցող անձնական ու հանրային իրադարձությունները, կանացի ամոթխածությամբ քողարկված ներանձնական զգացմունքներից մինչև համազգային ողբերգության անպարագիծ վիշտն ու տառապանքը:

«Ասույթային բանահյուսություն» բաժնի (488 միավոր)՝ առած-ասացվածքները, խրատները, «իմաստուն մտքերը», հանելուկները, դարձվածքներն ու փոխառությունները՝ 248 միավորը տղամարդիկ են հաղորդել, իսկ 240 միավորը՝ կանայք:

«Ազգագրական սկզբնաղբյուրներ» բաժնում ընդգրկված են ամերիկահայոց ծեսերը և տոները (ընդհանուր՝ 14 միավոր), որոնցից կանայք հաղորդել են 8, իսկ տղամարդիկ՝ 6 միավոր:

Երգերի նոտագրություններից (41 միավոր) 26 միավորը՝ տղամարդկանց բաժինն է, իսկ 15-ը՝ կանանց:

Վերլուծություն ըստ բաժինների

Այժմ անդրադառնանք աղյուսակի սյունակներով արտահայտված տվյալներին, որոնք գաղափար կտան ամերիկահայոց 206 բանասացների տարբեր սերնդային խմբերի հաղորդած նյութերի աստիճանական նվազման մասին.

- I. Առաջին սերունդ՝ 1870–1919 թթ. (բնօրրանում ծնվածներ՝ 763 միավոր),
- II. Երկրորդ սերունդ՝ 1920–1939 թթ. (գաղթաշխարհում ծնվածներ՝ 332 միավոր),
- III. Երրորդ սերունդ՝ 1940–1959 թթ. (ԱՄՆ-ում ծնվածներ՝ 57 միավոր),
- IV. Չորրորդ սերունդ՝ 1960–1979 թթ. (ԱՄՆ-ում ծնվածներ՝ 8 միավոր),
- V. Հինգերորդ սերունդ՝ 1980–1999 թթ. (ԱՄՆ-ում և ՀՀ-ում ծնվածներ՝ 5 միավոր):

Այս հինգ սերունդներից պարբերաբար (1979, 1990, 2001, 2004, 2008 թթ.) գրի առած ժողովրդական նյութերի համաժամանակյա (*սինխրոն*) և տարաժամանակյա (*դիսսինխրոն*) վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ աղյուսակում տարբեր սերունդների սերնդափոխությանը զուգընթաց զգալիորեն նվազել է գրառված նյութերի քանակը, իսկ քանակական փոփոխություններն իրենց հետքերել են նաև որակական փոփոխություններ:

Օրինակ՝ «Հայրենի տուն» հնավանդ երգի մեջ՝ «Հորս, մորս անուշ սրբեր / Գոհարներու հեկր չեմ փոխեր» հատվածն ԱՄՆ-ում դարձել է՝ «Հորս, մորս անուշ սրբեր / Դոլարներու հեկր չեմ փոխեր»²: Կամ՝ «Աղվոր աղջիկ եկու՛ր

² Սվազյան 2021, 555:

hnu, /Քեզի տանն Եզիպոս» երգի մեջ տեղը միջավայրի ազդեցության ներքո դարձել է. «*Աղվոր աղջիկ եկու՛ր hnu, /Քեզի տանն Լու-Անջելու»*³: Որակական փոփոխությունների են ենթարկվել նաև գործող անձանց կերպարները. եթե բնօրրանում ազնիվ ու միամիտ «հայ գեղջուկն» էր, իսկ գաղթօջախում՝ «արաբը», «հույնը», «իբեան», ապա ՀՀ-ում՝ «ընկերը, հարևանը», իսկ ԱՄՆ-ում՝ «մեքսիկը» կամ «այլագը»:

Այս երևույթի պատճառն ուսումնասիրելու համար կրկին դիմենք փաստերի: Առաջին սերնդի բանասացները (1870–1919 թթ.) բնօրրանում ծնվածներն են՝ Հայոց Ցեղասպանությունից (1915–1923 թթ.) հրաշքով փրկված ավագ սերնդի ներկայացուցիչները, ովքեր փոքրահասակ որբեր և որբուհիներ էին, ամերիկյան *միսիոներ*ների և Առաջավոր Ասիայի նպաստամատույց *կոմիտեի* հովանավորությամբ կամ այլ միջոցով փոխադրվել էին ԱՄՆ, տեղում անգլերեն ուսում, կրթություն ստացել և կորցրել էին իրենց մայրենին, սակայն շատերն անգլերեն գրել էին կամ ուրիշն էր գրի առել կամ ձայնագրել իրենց հուշ-վկայությունները: Նրանք ամենայն մանրամասնությամբ պատմել են Մեծ Եղեռնի թոհուրոհում իրենց տեսածն ու զգացածը, ինչպես, օրինակ՝ Հելեն (Հեղինե) Պարոնյանը (ծնվ. 1876 թ., Էրզրում > ԱՄՆ), Էլմաս Քավուկյանը (ծնվ. 1883 թ., Խարբերդ > ԱՄՆ), Դոլորես Զոհրապ-Լիպմանը (ծնվ. 1892 թ., Ստամբուլ > ԱՄՆ), Խանում Բալուցյանը (ծնվ. 1892 թ. Քդի > ԱՄՆ), Հելեն (Զոհար) Մամիկոնյանը (ծնվ. 1892 թ. Կ. Պոլիս > ԱՄՆ), Մանասե Չուգասըզյանը (ծնվ. 1896 թ., Սեբաստիա > ԱՄՆ), Զաքարիա Քոյանը (ծնվ. 1900 թ., Էրզրում > ԱՄՆ), Արշալույս Թինգուրյան-Չուգասըզյանը (ծնվ. 1906 թ., Սեբաստիա > ԱՄՆ), Սաթենիկ Տեր-Սարգիսյանը (ծնվ. 1908 թ., Տիգրանակերտ > ԱՄՆ), Իսահակ Ենուքյանը (ծնվ. 1912 թ., Բերրի > ԱՄՆ), Լյուիթեր Էսքիջյանը (ծնվ. 1913 թ., Քեսաբ > ԱՄՆ)⁴ և այլք:

Այնինչ այդ նույն առաջին սերնդի այն ներկայացուցիչները, որոնք Ցեղասպանությունից մազապուրծ սփռվել և գոյատևել էին տարբեր հայաշատ գաղթվայրերում՝ Սիրիա, Լիբանան, Իրաք, Եգիպտոս, Ֆրանսիա, Հունաստան, Բալկանյան և այլ երկրներ, որտեղ նաև այլադավան միջավայրում չօտարանալու համար հայեցի ուսում, կրթություն ստանալով՝ աշխատել են անաղարտ պահել ոչ միայն իրենց մայրենին, այլև իրենց բնօրրանի՝ պատմական Հայաստանի և Կիլիկիայի հիշողությունը և ավանդական բանահյուսության նշխարները:

Առաջին սերնդի ներկայացուցիչները 33-ն են. Մարիցա Օհանյանը (ծնվ. 1887 թ., Սեբաստիա > Մեքսեն > Հալեպ > ԱՄՆ), Գրիգոր Աճեմյանը (ծնվ. 1895 թ., Կոնիա > Դեյր էլ-Զոր > Հալեպ > Մարսել > ԱՄՆ), Թագուհի Աստոնյանը (ծնվ. 1900 թ., Բիթլիս > Դեյր էլ-Զոր > Հալեպ > Կահիրե > ԱՄՆ), Զորջ Թութիկյանը (ծնվ. 1900 թ., Քեսաբ > Մեքսեն > Հալեպ > ԱՄՆ), Սողոմոն Կուկույանը (ծնվ. 1900 թ., Խարբերդ > Մեղրին > Ադանա > ԱՄՆ), Հակոբ Թերզյանը (ծնվ. 1900 թ., Շապին Գարահիսար > Ստամբուլ > ԱՄՆ), Գրիգոր Գյոզալյանը (ծնվ. 1903 թ., Մուսա-լեռ > Փարիզ > Բեյրութ > Երևան > ԱՄՆ), Հովհաննես Քյոռոզլյանը (ծնվ. 1904 թ., Տիգրանակերտ > Հա-

³ Սվազյան 2021, 577:

⁴ Սվազյան 2021, 279–281, 283–290, 293–303, 307–308, 312–319, 324, 342–344, 346–349:

լեպ>ԱՄՆ), Իմաստուհի Գալայճյանը (ծնվ. 1904թ., Սեբաստիա>Հեքիմխանե>Ստամբուլ>ԱՄՆ), Հարություն Քոփուշյանը (ծնվ. 1906թ., Ադանա>Դեյր էլ-Զոր>Հալեպ>ԱՄՆ), Սաթենիկ Պետրոսյանը (ծնվ. 1908թ. Մուշ>Դեյր էլ-Զոր>Կորնթոս>ԱՄՆ), Գրիգոր Արմենյան (ծնվ. 1909թ., Կեսարիա>Կիպրոս>Բեյրութ>ԱՄՆ), Ազնիվ Սիրադեղյանը (ծնվ. 1909թ., Սեբաստիա>Հուն-Համա>Հալեպ>ԱՄՆ), Արաքսի Օսբաշյանը (ծնվ. 1909թ., Սեբաստիա>Սուրում>Բուխարեստ>ԱՄՆ), Կարապետ Ճապադջուրյանը (ծնվ. 1909թ., Բալու>Դեյր էլ-Զոր>Հալեպ>ԱՄՆ), Գևորգ Զիֆթյանը (ծնվ. 1909թ., Մուսա-լեռ>Այնճար>Երևան>ԱՄՆ), Աննաման Թուխմանյանը (ծնվ. 1910թ., Խարբերդ>Մեզիրե>Բեյրութ>ԱՄՆ), Վերոհինե Գասպարյանը (ծնվ. 1910թ., Այնթապ>Դեյր էլ-Զոր>Հալեպ>ԱՄՆ), Աննիկ Աշճյանը (ծնվ. 1910թ., Ադանա>Բեյրութ>ԱՄՆ), Եղիսաբեթ Շամշյանը (ծնվ. 1910թ., Խարբերդ>Հալեպ>ԱՄՆ), Կարապետ Փոփոնյանը (ծնվ. 1911թ. Բուրսա>Զմյուռնիա>ԱՄՆ), Սարգիս Սարյանը (ծնվ. 1911թ., Բալու>Մերդին>Հալեպ>ԱՄՆ), Գևորգ Քիլեշյանը (ծնվ. 1912թ., Եդեսիա>Հալեպ>ԱՄՆ), Մարթա Էոյլենշյանը (ծնվ. 1912թ., Խարբերդ>Սուրում>Ուրֆա>ԱՄՆ), Մարի Մանուկյանը (ծնվ. 1912թ., Կոնիա>Դեյր էլ-Զոր>Քիրքուք>Մոնրեալ>ԱՄՆ), Ռոբերտ Գալընյանը (ծնվ. 1912թ., Խարբերդ>Հալեպ>Ալեքսանդրիա>ԱՄՆ), Եսթեր Ստեփանյանը (ծնվ. 1913թ., Ադանա>Զմյուռնիա>Կորֆու>ԱՄՆ), Լուսաբեր Դեմիրճյանը (ծնվ. 1913թ., Կեսարիա>Բեյրութ>ԱՄՆ), Զորջ Քափլանը (ծնվ. 1913թ., Կահիրե>Մարսել>Սան-Պաուլո>ԱՄՆ), Եվնիկե Սալիպյանը (ծնվ. 1914թ., Այնթապ>Բեյրութ>Դամասկոս>ԱՄՆ), Պարզև Մակարյանը (ծնվ. 1915թ., Այնթապ>Բեյրութ>ԱՄՆ), Եսթեր Աստոնյանը (ծնվ. 1916թ., Մարաշ>Բեյրութ>ԱՄՆ), Ալիս Շարբաթովան (ծնվ. 1916թ., Ստամբուլ>Զմյուռնիա>Վառնա>ԱՄՆ)⁵:

Հայոց Ցեղասպանության ականատես այս վկաները, որոնց մեծ մասը Լոս-Անջելեսի և Ֆրեզնոյի «Արարատ» տարեցների տան բնակիչներն էին, ամենայն մանրամասնությամբ պատմել են իրենց տեսածն ու զգացածը:

Վերոհիշյալ ականատես վերապրողների հաղորդած հուշ-վկայություններն անմիջականորեն վերարտադրում են իրենց անձնական տպավորությունները, խոհերն ու մտորումները՝ արևմտահայությանը բաժին ընկած ճակատագրի կենդանի պատկերների ստույգ ու ճշմարտացի վերարտադրությամբ: Առաջին սերնդի այս բոլոր ականատես վերապրողներն իրենց վկայություններով և իրենց ապրած դաժան կյանքի փորձով իմաստնացած անհատականություններ էին, որոնք նաև հայերեն հաղորդել են 763 միավոր բանահյուսական տարաբնույթ նյութեր: Խորին երախտագիտություն և հարգանք նրանց հիշատակին:

Երկրորդ՝ ետեղեռնյան (ծնվ. 1920–1939թթ.) սերնդի բանասացների մեծ մասը ծնվել է տարագրության մեջ, օտար երկրներում՝ հայ գաղթավայրերում, որտեղ հայ եկեղեցին և հայկական դպրոցները ջանք չեն խնայել՝ նրանց մայրենի լեզվով և ազգային ոգով դաստիարակելու: Մական օտար միջավայրում ապրելն ու աշխատելը, այնուամենայնիվ, որոշակի կնիք են դրել նրանց մտածո-

⁵ Սվազյան 2021, 281–283, 290–293, 303–310, 312, 319–342, 344–346, 349–351, 357, 440–441, 447, 519, 578:

դության և բառապաշարի վրա: Երկրորդ սերնդի բանասացների հաղորդած նյութերի քանակը կիսով չափ սակավ է նախորդ սերնդից (332 միավոր). դրանք մասամբ ավագներից ավանդաբար ժառանգած ու մտապահած ժողովրդական ստեղծագործություններ են, նաև գաղթաշխարհում՝ այլազգի միջավայրում նոր հորինված բանահյուսական կենցաղային, գավելշտական, ասույթային ստեղծագործություններ ու երգեր՝ կապված այդ երկրների տարաշխարհիկ բնությանն ու կենդանական աշխարհին, տարբեր քաղաքների բազմազգ ժողովուրդների սովորույթներին, օտար լեզուներին ու օրենքներին անտեղյակ տարագիր հայերի շփոթ կացությանը, գործազրկության հարուցած դժվարություններին, նաև՝ զանգվածային հայրենադարձության առաջացրած խանդավառությանը:

Երկրորդ սերնդի ներկայացուցիչներից են՝ Ռոնյա Թերզյանը (ծնվ. 1920 թ., Հալեպ > Դեյր էլ-Զոր > Հալեպ > ԱՄՆ), Հակոբ Տեր-Պողոսյանը (ծնվ. 1920 թ., Ստամբուլ > Բեյրութ > ԱՄՆ), Լուսին Աբուսեֆյանը (ծնվ. 1920 թ., Մարաշ > Հալեպ > Երևան > ԱՄՆ), Էլիզա Տիրատուրյանը (ծնվ. 1920 թ., Բուխարեստ > ԱՄՆ), Երվանդ Փոլատյանը (ծնվ. 1920 թ., Հալեպ > Բուխարեստ > ԱՄՆ), Եղիա Ադուրյան (ծնվ. 1925 թ., Դեյր էլ-Զոր > Հալեպ > ԱՄՆ), Բերկրուհի Մանգասարյանը (ծնվ. 1926 թ., Բեյրութ > ԱՄՆ), Մարտիրոս Աշըկյանը (ծնվ. 1927 թ., Հալեպ > ԱՄՆ), Զարուհի Փարթամյանը (ծնվ. 1929 թ., Հալեպ > Մոսկով > Բեյրութ > ԱՄՆ), Հակոբ Արշակունին (ծնվ. 1932 թ., Կոկինիա > ԱՄՆ), Վարուժան Մեմիզյանը (ծնվ. 1934 թ., Բուխարեստ > Երևան > ԱՄՆ), Ջոն Գյուրճյանը (ծնվ. 1938 թ., Ղամիշլի > ԱՄՆ), Հայր Վրթանես ավագ քահանա Գալայճյանը (ծնվ. 1939 թ., Հալեպ > ԱՄՆ), Սիրարփի Գալայճյանը (ծնվ. 1939 թ., Բեյրութ > Երևան > ԱՄՆ)⁶ և այլք:

Երկրորդ սերնդի 14 շնորհաշատ բանասացներն արևմտահայերենի համ ու հոտով, իրենց ինքնատիպ խոսվածքով հաղորդել են բանահյուսական տարաբնույթ և արժեքավոր նյութեր, որոնց մեջ հանդես են գալիս նաև գաղթաշխարհի օտարերկրյա կերպարներ՝ արաբներ, հույներ, թուրքեր, հրեաներ ևն, իսկ Հայրենիքում ստեղծված նյութերի մեջ՝ գյումրեցիներ, արցախցիներ, բաքվեցիներ, ռուսներ և այլ կերպարներ: Այնինչ ԱՄՆ-ում ստեղծված նյութերի մեջ առկա են ամերիկացիներ, մեքսիկներ, տարբեր երկրներից գաղթածներ, նաև՝ ՀՀ-ից արտագաղթածներ, որոնք ոչ միշտ են տիրապետում անգլերենին և ունեն կենցաղային դժվարություններ ու բարդույթներ:

Ամերիկահայ այս տարաբնույթ, բայց հայաշունչ սերնդի մեծ մասը, ցավոք, արդեն ոչ ևս է, սակայն պարբերական ուղևորությունների ընթացքում մեզ հաջողվել է գրի առնել և կորստից փրկել նրանց հաղորդած՝ գաղափարապես արժեքավոր 332 միավոր նյութերը, որոնք մեծապես հարստացրել են ամերիկահայոց «բանահյուսական սկզբնաղբյուրներ» բաժինը:

Այնինչ այդ նույն երկրորդ սերնդի ամերիկահայ բանասացները, որոնք ծնվել էին ԱՄՆ-ում՝ Եղեռնից վերապրած սերնդից, ուսում, կրթություն ստացել ամերիկյան հաստատություններում, դարձել էին բժիշկներ, իրավաբաններ,

⁶ Սվազյան 2021, 358–360, 362–364, 371, 388, 395, 401, 438, 474, 493, 508, 556, 594:

արվեստագետներ, սակայն գրեթե կորցրել էին իրենց մայրենին և հազիվ հայերեն բառեր էին հիշում իրենց բանավոր խոսքի մեջ: Նրանք մտածում և արտահայտվում էին մեծ մասամբ անգլերեն: Սակայն ազգի ցավը նրանց ևս մորմոքում էր: Նրանցից շատերը 2008 թ. հատուկ հավաքվել էին Ֆրեզնոյում՝ Ռոզի Դոլարյանի տանը, որ ինձ պատմեն իրենց ծնողների կրած տառապանքների մասին: Այդ կես-հայերեն, կես-անգլերեն արտահայտվող երկրորդ սերնդի բանասացները 6-ն էին, որոնք պատմեցին իրենց ականատես-վկա ծնողների եղերական հուշերն՝ արդեն գրույցի տեսքով. Վազգեն Մարուքյանը (ծնվ. 1925 թ. Կոնեկտիկուտ > Ֆրեզնո), Ջոն (Հովհաննես) Բագրատունին (ծնվ. 1926 թ., Ռոդ Այլենդ > Լոս-Անջելես), Մարգրետ Մինասյանը (ծնվ. 1929 թ., Նյու-Յորք > Լոս-Անջելես), Լիոն Շիշմանյանը (ծնվ. 1931 թ., Փրովիդենս > Ֆրեզնո), Արմինե Շահնազարյան-Շիշմանյանը (ծնվ. 1933 թ., Ֆրեզնո), Ռոզի Դոլարյանը (ծնվ. 1935 թ., Սան-Դիեգո > Ֆրեզնո)⁷:

Երրորդ սերնդի բանասացները (1940–1959 թթ.) ընդամենը 68 միավոր նյութ են հաղորդել: Հայախոս բանասացներն արդեն նվազել էին ու դարձել քչախոս: ՀՀ-ից արտագաղթածներն ավելացել էին, բայց նրանք զգուշավոր էին, շատ չէին խոսում և շատ չէին արտահայտվում: Ոմանք արդեն զավեշտով էին պատմում իրենց անգլերեն չգիտենալու հետևանքով ծիծաղելի վիճակներում հայտնվելը, ինչպես՝ Մարի Դուդակյանը (ծնվ. 1938 թ., Մոսկվա > Այն-ճար > Բեյրութ > Երևան > Լոս-Անջելես) իր հաղորդած մի շարք ինքնակենսագրական զավեշտական գրույցներում: Այնինչ Առաջավոր Ասիայից, Եգիպտոսից ու Եւրոպայից գաղթածներից շատերը, որոնք տիրապետում էին անգլերենին, ԱՄՆ-ում ուսում, կրթություն ստանալով, նույնիսկ զույգ համալսարաններ ավարտելով, արդեն բարձր պաշտոնների ու դիրքերի էին հասել, յուրացրել էին տեղի օրենքներն ու տեխնիկայի նորությունները, հաջողություններ արձանագրել գիտության և մշակույթի տարբեր ոլորտներում:

Երրորդ սերնդի բանասացները 10-ն են՝ Ռուբինա Փիրումյանը (ծնվ. 1938 թ., Թավրիզ > ԱՄՆ), Ջոն Չուգասըզյանը (ծնվ. 1939 թ., Նյու-Յորք > Լաս-Վեգաս > Ֆրեզնո), Ջո (Հովսեփ) Դադղիկյանը (ծնվ. 1941 թ., Հեյլըր-հիլ > ԱՄՆ), Լիզա Դադղիկյանը (ծնվ. 1941 թ., Մեշեդ > ԱՄՆ), Լևոն Չորբաջյան (ծնվ. 1942 թ., Նյու-Ջերսի), Արա Գաբրիելյանը (ծնվ. 1943 թ., Նյու-Յորք), Բարբարա Չուգասըզյանը (ծնվ. 1946 թ., Ման-Ֆրանցիսկո > Ֆրեզնո), Արա Ղազարյանցը (ծնվ. 1948 թ., Թեհրան > Բոստոն), Տիգրան Թումանյանը (ծնվ. 1948 թ., Հալեպ > Դետրոյտ), Հարութ Սասունյանը (ծնվ. 1950 թ., Հալեպ > ԱՄՆ), Մագի Մանգասարյան-Գոշինը (ծնվ. 1954 թ., Բեյրութ > ԱՄՆ)⁸:

Չորրորդ սերնդի բանասացները (1960–1979 թթ.) հաճախ նաև խառնամուսնություններից ծնվածներն են, որոնք տեղում հայկական դպրոց չեն հաճախել, իրենց ուսումնառությունն իրականացվել է ամերիկյան հաստատություններում, ուստի հայերեն գրեթե չգիտեն: Նրանք մտածում և արտահայտվում են անգլերեն:

⁷ Սվազյան 2021, 364, 366–370, 631:

⁸ Սվազյան 2021, 399, 400, 403, 406–415, 419:

Հինգերորդ սերնդի բանասացներն արդեն 1980–1999 թթ. ծնվածներն են, որոնք ևս հարցման են ենթարկվել: Նրանք չորս մանկահասակ տղաներ են, որոնցից Ստիվի Դադուրը (ծնվ. 1980 թ., Լոս-Անջելես) 10 տարեկան էր, իսկ նրա եղբայրը՝ Սկատի Դադուրը (ծնվ. 1982 թ., Լոս-Անջելես)՝ 8 տարեկան: Նրանք ծնվել էին եգիպտահայ գաղթական ընտանիքում և հաճախել «Public School»՝ ամերիկյան հանրային դպրոց: Անգլիախոս այդ եղբայրները հեռու էին հայկական արմատներից, հայերեն չէին խոսում և չէին հասկանում իմ խոսածը: Նրանց հրապուրում էր ժամանակակից «Rap»՝ անընդհատ կրկնվող, միապադաղ հանգերգով երաժշտությունը և համակարգչային «Nintendo» խաղը, որով զբաղվում էին դպրոցից հետո՝ տանը, մինչև ուշ գիշեր: Նրանք գրեթե անտարբեր ու անհաղորդ էին իրենց նախնիների, նույնիսկ իրենց ծնողների անցյալի հետ կապված հիշողություններին:

Այնինչ նույն տարիքի՝ ՀՀ-ից արտագաղթած 10-ամյա Վարդան Բուրսալյանը (ծնվ. 1980 թ., Երևան > Լոս-Անջելես) դպրոց հաճախելու հենց առաջին օրը, մտահոգ վերադառնալով, արտասուքն աչքերին մորն ասել է. «Մամա ջան, դասարանում մի հատ հայ չկա, մի հատ հայ աղջիկ էլ չկա, բա ես ո՞ւմ հետ պիտի ամուսնանամ»: Իսկ նրա փոքր եղբայրը՝ Դավիթ Բուրսալյանը (ծնվ. 1982 թ., Երևան > Լոս-Անջելես), որին նույն «Public School»-ում, երբ թեստ են տվել, թե՛ «Եթե մեկ միլիոն դոլար ունենաս, ի՞նչ կանես», 8-ամյա Դավիթը պատասխանել է. «Կեսը կորկեն Հայաստան՝ երկրաշարժից աղետյալներին, կեսն ալ կտամ ծնողքիս, որ ինձ մեծացրել են»⁹: Տարբերությունն ակնհայտ է օտար և հայրենի հողում ծնվածների միջև:

Սակայն հայությունից հեռացած այդ վերջին՝ նոր սերունդների մեջ հայտնվում են նաև անհատներ, որոնք զգալով իրենց ազգային ինքնության նվազ կողմերը, հաճախ կտրուկ շրջադարձ կատարելով՝ միտվում են դեպի իրենց նախնիների արմատները: Նրանք որոշ տարիքից հետո սկսում են «ինքնուսույցով» կամ համացանցով հայերեն սովորել, սկսում են հետաքրքրվել իրենց հայ պապերի ու տատերի անցյալի պատմություններով, փորձում են հարցուփորձով կամ գրքերով մշուշի միջից դուրս բերել նրանց մոռացված հիշողությունները և կամ իրենց կես-հայ, կես-օտար զավակներին հայկական կիրակնօրյա դպրոց ուղարկել, որպեսզի իրենք ևս նրանց հետ հայոց լեզվի հիմքերը սովորեն: Ոմանք սկսում են մասնակցել հայկական միջոցառումներին, որպեսզի գոնե ընդհանուր գաղափար ունենան հայության մասին: Ոմանք սկսում են հոգեպես մերձենալ և նյութապես աջակցել Սպիտակի երկրաշարժից տուժած աղետի գոտուն, անկախացած ՀՀ-անը և ազատագրված Արցախին: Ոմանք՝ որպես զբոսաշրջիկներ այցելում են ՀՀ տեսարժան վայրերը, ի մոտո ծանոթանում հյուրընկալ հայ ժողովրդի անցյալի պատմությանն ու ներկայի ապրելակերպին, անձամբ տեսնում և գնահատում են հայերի աշխատասիրությունն ու ստեղծագործ կարողությունները, ինքնատիպ ու բարձրարվեստ մշակույթը: Ոմանք՝ որպես կամավոր, մասնակցում են ՀՀ շինարարական ջոկատների աշխատանքներին, մտերմանում, սիրում ու ամուսնանում, ընտանիք են

⁹ Սվազլյան 2021, 426:

կազմում, տներ կառուցում, լրիվ կամ մասամբ բնակություն հաստատում Երևանում, շրջաններում, նաև Արցախում՝ Ստեփանակերտում կամ սահմանամերձ շրջաններում՝ սատարելով տեղի բնակիչներին և կամ նյութական ներդրումներ կատարում, ձեռնարկություններ հիմնում, աշխատատեղեր ստեղծում՝ գործակա՜նորեն մասնակցելով հայրենիքի վերաշինության գործին: Տասնամյակների հոլովույթի մեջ նման անհատներն ու փաստերն արդեն հայտնի իրողություններ են, քանի որ օրեցօր օտարացող, իրենց արմատներից հեռացող նոր սերունդներն ինքնագիտակցության և ինքնարժևորման ներքին մղումով արդեն կամաց-կամաց զարթոնք են ապրում...

Եզրահանգումներ

Ժողովրդական նյութերի և բանասացների սեռատարիքային խմբերի միջև եղած փոխհարաբերությունների համեմատական վերլուծությունից պարզվել է, որ 100 տարիների ընթացքում 5 սերունդների կրած քանակական ու որակական փոփոխությունների հետևանքով աստիճանաբար նվազել է ամերիկահայոց ավանդական բանահյուսության և հայապահպանության մակարդակը: Բազմաէթնիկ համակեցության նոր միջավայրի ազդեցության ներքո անհատն ինքնաբերաբար դառնում է բազմինքնության տեր՝ *զոքսլացված* անհատ: Ուստի, հակառակ հայապահպանության ամենօրյա ճիգ ու ջանքերի, սերնդից սերունդ փոփոխության է ենթարկվում նաև ամերիկահայոց ազգային ինքնությունը, լեզվամտածողությունն ու հոգեգիտակցական աշխարհը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՍՎԱԶԼՅԱՆ 1984

Սվազլյան Վ.Գ., Մուսա լեռ // Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 16, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984, 219 էջ:

ՍՎԱԶԼՅԱՆ 2021

Սվազլյան Վ.Գ., Ամերիկահայոց բանավոր ավանդույթը ժամանակի հոլովույթում, Երևան, «Գիտություն», 2021, 904 էջ:

Verjine G. Svazlian, Dr. Habil.

Institute of Archaeology and Ethnography, NAS of RA

THE LEVEL OF PRESERVING ARMENIANNESS AMONG THE ARMENIAN-AMERICANS ACCORDING TO THE INSCRIBED MATERIALS OF THE ORAL TRADITION

Keywords: USA, Western Armenia, Cilicia, folklore, epic folklore, lyrical folklore, proverbial folklore, generations.

The present paper is dedicated to the popular life of the Armenian-Americans, their demeanor, their way of living and speaking in that important period, rich in significant events. This work is the first attempt to present the oral tradition of the Armenians living in the USA, which, regrettably, has never been written down, nor subjected to a scientific study before. Whereas, as a reflector of popular life, it includes answers to a great number of questions.

The comparative analysis of the popular materials and the sex-age groups of the Armenian-Americans narrators, studied by the method of quantitative analysis, shows the correlation of the numerical scheme of the sex-age groups of the 206 Armenian-American narrators and of the 1,165 units of materials they have communicated us. We have elucidated the quantitative and qualitative changes of the traditional folklore, as well as the level of Armenian-preservation of the 5 generations in the course of a 100 years.

During our five research trips to the USA (in 1979, 1990, 2001, 2004, 2008), we have, though intermittently, writing down, audio- and video-recording word for word, fragment for fragment, assembled the unique primary source relics of the Armenian popular oral tradition of the Armenian-Americans.

That is the reason, why a particular importance was attached to those diverse historico-cognitive popular and cultural national values communicated by the representatives of the various generations of the Armenian community in the USA with the purpose of saving them from total loss and bequeathing them to the coming generations.

*Вержине Гарниковна Связян, д. ф. н.
Институт археологии и этнографии, НАН РА*

УРОВЕНЬ СОХРАНЕНИЯ АРМЯНСТВА У АМЕРИКАНСКИХ АРМЯН ПО МАТЕРИАЛАМ УСТНОЙ КУЛЬТУРЫ

Ключевые слова: США, Западная Армения, Киликия, фольклор, эпический фольклор, лирический фольклор, пословичный фольклор, поколения.

Данное исследование посвящено народной жизни, а также укладу и образу жизни американских армян, особенностям их разговорной лексики. В нем впервые сделана попытка представить устную традицию американских армян, которая, к сожалению, по сей день не была записана и не стала предметом научного исследования, в то время как являясь непосредственным отражением жизни народа, она может дать ответы на многие вопросы.

Сравнительный анализ половозрастных групп сказителей и народоведческих материалов американских армян, основываясь на Методе количественного анализа, показал численную корреляцию схемы материалов (1.165 единиц), представленного 206 сказителями разных половозрастных групп. Выявлен также количественные и качественные изменения, которым подвергся традиционный фольклор, а также уровень сохранения армянской идентичности среди 5 поколений американских армян на протяжении 100 лет.

Во время пяти наших поездок в США (1979, 1990, 2001, 2004, 2008 гг.), хотя и с перерывами, но все же нам удалось по крупицам записать (а также на аудио- и видеокассеты) самобытные реликвии армянского устного народного творчества.

Следовательно, особенно важно было спасти от бесследного исчезновения и забвения и передать будущим поколениям эти разнородные первоисточники, с национальной точки зрения являющие собой ценный историко-познавательный, народоведческий, культурологический материал, предоставленный нам представителями разных поколений армянской диаспоры США.

Աղյուսակ 1.
Նյութերի և քանասացների սեռաբարեբալին փոխկապվածությունները

նյութի տեսակը	նյութի ընդհանուր քանակը	քանասացի սեռը (կին, տղամարդ)	քանասացի տարիքը (տարեկան)								ընդամենը		
			5-րդ սերունդ 1980-1999 թթ.		4-րդ սերունդ 1960-1979 թթ.		3-րդ սերունդ 1940-1959 թթ.		2-րդ սերունդ 1920-1939 թթ.			1-ին սերունդ 1870-1919 թթ.	
			8-16	17-19	20-29	30-39	40-49	50-59	60-69	70-79		80-109	
պատմական սկզբնաղբյուրներ (106 միավոր)													
1. Հայոց Ցեղասպանությունը ամերիկահայոց պատմական հիշողության մեջ (65 միավոր)													
ա. ականատես վերապրողների հուշ-վկայություններ	37	կ. տ.							- 1	4 3	16 13	20 17	
բ. զրույց-վկայություններ	28	կ. տ.					1 1	1 -	3 3	6 4	6 3	17 11	
2. Ժամանակակիցների հարցազրույցներ (41 միավոր)													
Ժամանակակիցների հարցազրույցներ	41	կ. տ.			1 -	- 1	2 2	2 6	4 7	5 5	1 5	15 26	
քանահյուսական սկզբնաղբյուրներ (1.004 միավոր)													
ա. վիպական քանահյուսություն (300 միավոր)													
1. ավանդազրույցներ	5	կ. տ.								- 1	3 1	3 2	
2. հեքիաթներ	15	կ. տ.									10 5	10 5	
3. առակներ	16	կ. տ.							- 4	- 4	5 3	5 11	
4. կենդանապատում զրույցներ	9	կ. տ.				- 1			- 2	- 4	1 1	1 8	
5. բարոյախրատական զրույցներ	12	կ. տ.					1 -	2 -			4 5	7 5	
6. պատմական զրույցներ	20	կ. տ.					2 -		- 2	- 13	1 2	3 17	
7. կենցաղային զրույցներ													
ա. հայերը բնօրրանում	8	կ. տ.					- 1			1 2	1 3	2 6	
բ. հայերը գաղթաշխարհում	5	կ. տ.							- 1	- 2	- 2	- 5	

գ. հայերն ԱՄՆ-ում	26	կ. տ.				1 -		2 -	1 2	2 6	6 2	1 3	13 13
դ. հայրենադարձներ	2	կ. տ.							1 -	1 -			2 -
8. զավեշտագրույցներ													
ա. Օսմանյան կայսրությունը և հայերը բնօրրանում	24	կ. տ.									- 24		- 24
բ. հայերը և այլազգիներն ԱՄՆ-ում	43	կ. տ.							1 7	- 12	4 13	1 5	6 37
գ. նորեկները Խորհրդային հայրենիքում	31	կ. տ.						- 2	1 2	- 4	1 7	- 14	2 29
դ. հայաստանցիներն ԱՄՆ-ում	84	կ. տ.				- 1		4 3	4 4	3 27	18 15	1 4	30 54
բ. քնարական բանահյուսություն (216 միավոր)													
1. ամերիկահայոց պատմական երգեր													
ա. Հայոց Ցեղասպանության (1915–1923 թթ.) երգեր	21	կ. տ.								- 1	6 -	2 12	8 13
բ. որբի և որբանոցի երգեր	12	կ. տ.						3 -			- 1	7 1	10 2
գ. ինքնապաշտպանական հերոսամարտերի երգեր	8	կ. տ.								- 1	2 3	- 2	2 6
դ. հայրենագրկման երգեր	4	կ. տ.								1 -		2 1	3 1
ե. պանդխտության երգեր	5	կ. տ.						- 1			1 -	3 -	4 1
զ. պահանջատիրության երգեր	6	կ. տ.								2 -	2 -	- 2	4 2
է. հայրենադարձության երգեր	5	կ. տ.						2 -				- 3	2 3
2. ամերիկահայ կյանքի երգեր													
ա. մանկության երգեր	8	կ. տ.							1 -	3 -	1 -	3 -	8 -
բ. խաղիկներ	79	կ. տ.							16 -	7 1		55 -	78 1
գ. սիրո և ընտանիքի երգեր	23	կ. տ.							3 -	10 2	- 3	2 3	15 8
դ. կենցաղի, քեֆ-թայմի երգեր	16	կ. տ.							1 -	1 7		- 7	2 14
ե. ձոներգեր	15	կ. տ.						- 1			1 -	- 13	1 14
զ. ազգահավաքի և հայրենաշինության երգեր	14	կ. տ.							3 1	- 1	1 2	1 5	5 9

գ. աստվածային բանահյուսություն (488 միավոր)												
1. առած-ասացվածքներ	129	կ. տ.					5 -	6 3	3 21	15 17	37 22	66 63
2. խրատներ	143	կ. տ.					6 1	4 6	10 7	18 24	36 31	74 69
3. իմաստուն մտքեր	115	կ. տ.				- 1	4 2	7 12	3 19	13 21	10 23	37 78
4. հանելուկներ	25	կ. տ.					1 -	4 3	2 2	5 1	7 -	19 6
5. դարձվածքներ	23	կ. տ.						4 -	1 -	7 4	3 4	15 8
6. փոխառություններ	53	կ. տ.	2 3		2 3	- 2	2 3	6 6	4 3	12 -	- 5	29 24
ազգագրական սկզբնաղբյուրներ (14 միավոր)												
1. ամերիկահայոց ծեսեր	6	կ. տ.						1 -	- 2	2 -	- 1	3 3
2. ամերիկահայոց տոներ	8	կ. տ.					1 -	2 -	- 2	2 1		5 3
երգերի նոտագրություններ (41 միավոր)												
երգերի նոտագրություններ	41	կ. տ.					- 2	2 -	3 3	3 4	7 17	15 26
նյութերի քանակը ըստ սեռատարիքային ցուցիչների		կ. տ.	2 3		4 4	1 4	21 31	76 52	63 141	145 171	226 221	541 624
ընդհանուր՝	1165		5		8	5	52	128	204	316	447	1165
նյութերի ընդհանուր քանակը ըստ սեռատարիքային ցուցիչների և սերունդների		կ. տ.	2 3		4 4		22 35		139 193		371 392	541 624
ընդհանուր՝	1165	կ. տ.	5		8		57		332		763	1165

Աղյուսակ 2.
Նյութերի և բանասացների սեռապարհիքային փոխկապվածությունները

սկզբնաղբյուրներ	միավոր	կին	տղամարդ
պատմական սկզբնաղբյուրներ			
1. Հայոց Ցեղասպանությունը ամերիկահայոց պատմական հիշողության մեջ			
ա. ականատես վերապրողների հուշ-վկայություններ	37 միավոր	20 կին	17 տղամարդ
բ. գրույց-վկայություններ	28 միավոր	17 կին	11 տղամարդ
2. Ժամանակակիցների հարցազրույցներ	41 միավոր	15 կին	26 տղամարդ
բանահյուսական սկզբնաղբյուրներ			
ա. վիպական բանահյուսություն			
1. ավանդազրույցներ	5 միավոր	3 կին	2 տղամարդ
2. հեքիաթներ	15 միավոր	10 կին	5 տղամարդ
3. առակներ	16 միավոր	5 կին	11 տղամարդ
4. կենդանապատում զրույցներ	9 միավոր	1 կին	8 տղամարդ
5. բարոյախրատական զրույցներ	12 միավոր	7 կին	5 տղամարդ
6. պատմական զրույցներ	20 միավոր	3 կին	17 տղամարդ
7. կենցաղային զրույցներ			
ա. հայերը բնօրրանում	8 միավոր	2 կին	6 տղամարդ
բ. հայերը գաղթաշխարհում	5 միավոր	-	5 տղամարդ
գ. հայերն ԱՄՆ-ում	26 միավոր	13 կին	13 տղամարդ
դ. հայրենադարձներ	2 միավոր	2 կին	-
8. զավեշտազրույցներ			
ա. Օսմանյան կայսրությունը և հայերը բնօրրանում	24 միավոր	-	24 տղամարդ
բ. հայերը և այլազգիներն ԱՄՆ-ում	43 միավոր	6 կին	37 տղամարդ
գ. նորեկները Խորհրդային հայրենիքում	31 միավոր	2 կին	29 տղամարդ
դ. հայաստանցիներն ԱՄՆ-ում	84 միավոր	30 կին	54 տղամարդ
բ. քնարական բանահյուսություն			
1. ամերիկահայոց պատմական երգեր			
ա. Հայոց Ցեղասպանության երգեր (1915-1923 թթ.)	21 միավոր	8 կին	13 տղամարդ
բ. որբի և որբանոցի երգեր	12 միավոր	10 կին	2 տղամարդ
գ. ինքնապաշտպանական հերոսամարտերի երգեր	8 միավոր	2 կին	6 տղամարդ
դ. հայրենագրկման երգեր	4 միավոր	3 կին	1 տղամարդ
ե. պանդխտության երգեր	5 միավոր	4 կին	1 տղամարդ
զ. պահանջատիրության երգեր	6 միավոր	4 կին	2 տղամարդ
է. հայրենադարձության երգեր	5 միավոր	2 կին	3 տղամարդ
2. ամերիկահայ կյանքի երգեր			
ա. մանկության երգեր	8 միավոր	8 կին	-
բ. խաղիկներ	79 միավոր	78 կին	1 տղամարդ

գ. սիրո և ընտանիքի երգեր	23 միավոր	15 կին	8 տղամարդ
դ. կենցաղի, քեֆ-թայմի երգեր	16 միավոր	2 կին	14 տղամարդ
ե. ձոներգեր	15 միավոր	1 կին	14 տղամարդ
զ. ազգահավաքի և հայրենաշինության երգեր	14 միավոր	5 կին	9 տղամարդ
զ. ասույթային բանահյուսություն			
1. առած-ասացվածքներ	129 միավոր	66 կին	63 տղամարդ
2. խրատներ	143 միավոր	74 կին	69 տղամարդ
3. իմաստուն մտքեր	115 միավոր	37 կին	78 տղամարդ
4. հանելուկներ	25 միավոր	19 կին	6 տղամարդ
5. դարձվածքներ	23 միավոր	15 կին	8 տղամարդ
6. փոխառություններ	53 միավոր	29 կին	24 տղամարդ
ազգագրական սկզբնաղբյուրներ			
1. ամերիկահայոց ծեսեր	6 միավոր	3 կին	3 տղամարդ
2. ամերիկահայոց տոներ	8 միավոր	5 կին	3 տղամարդ
երգերի նոտագրություններ	41 միավոր	15 կին	26 տղամարդ
ընդամենը	1.165 միավոր	541 կին	624 տղամարդ

Ներկայացվել է՝ 09.01.2025,
գրախոսվել է՝ 21.03.2025,
ընդունվել է՝ 10.07.2025: